



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

« 16 » 08 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0144-23

Ձեռնարկողը՝

«Լիճքվագ» ՓԲԸ

Ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի 56 շ., բ. 10

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի Մեղրի համայնքում
լեռնահարստացման ֆաբրիկայի կառուցման
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեքվություն
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 15 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲՓ № 0144-23

< 16 > օգոստոսի 2023թ.

Սյունիքի մարզի Մեղրի համայնքում լեռնահարստացման ֆաբրիկայի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Լիճքվազ» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Սյունիքի մարզ, Մեղրի համայնք

Ներածական մաս. Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզում, Մեղրի գետի միջին հոսանքի աջ ափում, Վարդանիձոր գյուղից 4կմ դեպի հյուսիս-արևմուտք, իսկ Մեղրի ե/գ կայարանից՝ 20կմ հեռավորության վրա:

Մոտակա բնակավայրերն են Եղնիկասար, Վարդանիձոր, Լեհվազ, Թխկուտ, Լիճք Այգեձորը: Հանքավայրից 2.5կմ հեռավորության վրա անցնում է Երևան-Մեղրի ավտոմայրուղին: Հանքավայրը բաշխված է 1200-1700մ բացարձակ բարձրությունների վրա: Ֆաբրիկան զբաղեցնելու է 1,2հա տարածք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի բ. ենթակետի՝ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Սույն նախագծով նախատեսվում է տեղում իրականացնել հանքաքարի վերամշակում՝ կառուցելով լեռնահարստացման ֆաբրիկա:

Լիճքվազ-Թեյի հանքավայրում արդյունահանումն իրականացվում է ստորգետնյա եղանակով, ինքնագնաց մեքենաների կիրառմամբ: Հանքաքարը ստորգետնյա 20տ բեռնատարողությամբ ավտոինքնաթափերով (XYVK-20) տեղափոխվում է հանքուղու մուտքի մոտ՝ հանքաքարի բաց հարթակ, որտեղ բարձվում է 30,0տ տարողությամբ ավտոինքնաթափեր և տեղափոխվում Կապան՝ հետագա վերամշակման համար:

Ֆաբրիկայի և արտադրական լցակայանի կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով.



Ֆաբրիկա

x	y
8603969,218	4318940,15
8604009,216	4318940,15
8604009,216	4318867,242
8604034,416	4318867,242
8604034,416	4318723,373
8603991,216	4318723,373
8603991,216	4318841,083
8603969,216	4318841,083

Չոր պոչեր պահեստարան


x	y
8603470,654	4319265,033
8603411,665	4319436,153
8603373,825	4319482,716
8603203,334	4319344,163
8603162,068	4319245,164
8603360,26	4319175,319

Ներկայում Լիճքվազ-Թեյի ստորգետնյա հանքից տարեկան արդյունահանված 150 հազ.տ հանքաքարը վերամշակման համար տեղափոխվում է «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության հարստացման ֆաբրիկա, որի հեռավորությունը հանքից մոտ 70կմ է: Ընդ որում՝ հանքից մինչև Երևան-Մեղրի ավտոմայրուղին 7կմ գրունտային ճանապարհ է:

Հանքի արտադրողականությունն ըստ նախագծի կազմում է տարեկան 300հազ.տ:


Ֆաբրիկան բաղկացած կլինի հետևյալ հիմնական տեղամասերից. խոշոր ջարդման, ջարդված հանքաքարի պահեստավորման, մանրացման, ֆլոտացման (ազդանյութերի բաժանմունքով), խտանյութի ջրազրկման, գրավիտացիոն կորզման, պոչերի ջրազրկման և բաշխման:

Խոշոր ջարդման տեղամասը կահավորվելու է ընդունիչ զետեղարանով, թիթեղավոր փոխակրիչային սնուցիչով, 60-100մ³/ժ արտադրողականությամբ այտային ջարդիչով և ժապավենային փոխակրիչով: Ջարդված հանքաքարի պահեստում շահագործվելու է մինչև 2.5մ³ ծավալով շերտի ունեցող ամբարձիչ տեխնիկա: Մանրացման տեղամասը կահավորվելու է 5.5մ տրամագծով և 1.8մ երկարությամբ մեկ խոնավ կիսահինքնամանրացման աղացով, 2.7մ տրամագծով և 4.5մ երկարությամբ մեկ գնդավոր աղացով և հիդրոցիկլոնային դասակարգիչով: Ֆլոտացման տեղամասում լինելու են հիմնական և ստուգիչ ֆլոտացման համար երկխցանի 4 հատ ֆլոտամեքենաներ՝ յուրաքանչյուր խցի 25մ³ ծավալով, վերամաքրման երկխցանի 3 հատ և եռախցանի 2 հատ ֆլոտամեքենաներ՝ յուրաքանչյուր խցի 3.5մ³ ծավալով և վերամաքրման 2 հատ երկխցանի ֆլոտամեքենաներ՝ յուրաքանչյուր խցի 1.2մ³ ծավալով: Գրավիտացիոն հանգույցը կահավորվելու է 120տ/ժ արտադրողականությամբ մեկ խտացուցիչով (կոնցետրատոր) և 45մ² գումարային ակտիվ մակերեսով երկու եռահարկ գրավիտացիոն սեղաններով: Խտանյութի ջրազրկման տեղամասը կահավորվելու է երկու թանձրիչով և երկու մամլաքամիչներով: Պոչերի ջրազրկման և բաշխման տեղամասը նույնպես կահավորվելու է երկու թանձրիչով և երկու մամլաքամիչներով: Հանքաքարը բեռնատար ինքնաթափ մեքենաներով լցվում է խոշոր ջարդման տեղամասի ընդունիչ զետեղարան, որտեղից թիթեղավոր սնուցիչով տրվում է այտավոր ջարդիչին: Հաշվի առնելով հանքաքարի առանձնահատկությունները՝ ընտրվել է այտի բարդ տեղաշարժով ջարդիչ: Բանի



որ ջարդիչը նախատեսվում է շահագործել ընհատումներով՝ վերամշակման հետագա փուլերը հանքաքարով կայուն մատակարարելու նպատակով գործելու է ջարդված հանքաքարի պահեստ, որտեղ կուտակված հանքաքարը ժապավենային փոխակրիչով տրվելու է աղաց 1: Աղաց 1-ում հանքաքարին ավելացվում են տարբեր տրամաչափի երկաթե աղացագնդեր և ջուր: Աղաց 1-ից ինքնամանրացված հանքաքարի խյուսը տրվում է աղաց 2, որն աշխատում է հիդրոցիկլոնային դասակարգիչի հետ փակ շրջափուլով: Հանքաքարի խյուսի ֆլոտացման համար բավարար մանրացված մասը հիդրոցիկլոնային դասակարգիչից տրվում է ֆլոտացման տեղամաս: Ֆլոտացման տեղամասում հանքաքարի ջրախառը խյուսը լցվում է հիմնական և ստուգիչ ֆլոտացման ֆլոտամեքենաներ: Ֆլոտացման գործընթացում առանցքային նշանակություն ունի մետաղների և մետաղի բարձր պարունակություն ունեցող հանքանյութերի ցածր թրջելիությունը (հիդրոֆոբություն): Մետաղ պարունակող հանքանյութերը հիդրոֆոբ են, քանի որ մետաղների ատոմների արտաքին էլեկտրոնային թաղանթում էլեկտրոնները սակավաթիվ են (որպես կանոն՝ մեկ կամ երկու հատ), ինչի հետևանքով մետաղների ատոմները չեն մտնում ջրածնային կապերի մեջ և դրանք պարունակող նյութերը չեն թրջվում: Ցածր թրջելիության շնորհիվ մետաղ պարունակող միներալները ջրային միջավայրում կուտակվում են հեղուկ-գազ ֆազային անցումներում: Այդպիսի անցումների դեր ֆլոտացման մեքենաների խցիկներում կատարում են պղպջակները, որոնք գոյանում են մանրացված հանքաքարի և ջրի խառնուրդի մեջ օդ մղելու արդյունքում: Մետաղ պարունակող հանքանյութերը հավաքվում են պղպջակների մակերևույթին, դրանց հետ միասին բարձրանում վերև և կուտակվում խցիկի վերևի հատվածում գոյացող փրփուրի շերտերում: Մետաղ պարունակող հանքանյութերի թրջելիությունն ավելի նվազեցնելու և ջրային միջավայրը փրփրուն դարձնելու նպատակով ֆլոտացման գործընթացում հանքաքարի խյուսին ավելացվում են ազդանյութեր: Ֆլոտացման խցիկներից վերցված փրփուրն ապագա ապրանքային խտանյութն է, որն այդուհետ ուղարկվում է վերամաքրման ֆլոտամեքենաներ, որտեղից էլ՝ խտանյութի ջրազրկման տեղամաս: Զրազրկման տեղամասում խտանյութը, անցնելով թանձրիչների և մամլաքամիչների միջով, ստանում է վերջնական ապրանքային տեսք: Օգտակար բաղադրիչ՝ ոսկի, արծաթ և պղինձ պարունակող հանքանյութերը կորզելուց հետո հանքաքարի խյուսը՝ պոչանքը, տրվում է գրավիտացիոն հանգույց: Գրավիտացիոն հանգույցի շահագործման հիմնական նպատակը ազատ ոսկու և այլ մետաղների հնարավոր առկայության դեպքում դրանք պոչանքից կորզելը, և պոչերում օգտակար բաղադրիչների պարունակությունը հնարավորինս նվազեցնելն է:

Ֆաբրիկայի աշխատանքային ռեժիմն ընդունված է տարեկան 340 օր, 3 հերթափոխով: Գրավիտացիոն տեղամասից պոչանքը տրվում է պոչերի ջրազրկման տեղամաս, որտեղ թանձրիչներով և մամլաքամիչով անցնելուց հետո վերածվում է մանրահատիկ ավազ հիշեցնող զանգվածի՝ 8-10% խոնավությամբ: Պոչերի ջրազրկման և բաշխման տեղամասին կից գործելու է պոչանքի կառավարման հարթակ, որտեղ պոչանքը ժամանակավոր պահեստավորվելու և ըստ օգտակար բաղադրիչի մնացորդային պարունակության դասակարգվելու է: Դասակարգման արդյունքում առանձնացված պոչանքի առավել հարուստ մասը՝ ընդհանուր զանգվածի մինչև 30%-ը, նախատեսվում է պահեստավորել վերգետնյա պահեստում՝ հետագա հնարավոր վերամշակումը դյուրինացնելու նկատառումով: Զրազրկված



պոչերի հիմնական մասը պոչերի կառավարման հարթակից տեղափոխվելու է հանքի ստորգետնյա դատարկություններ և օգտագործվելու դրանց լցափական համար:

Արտադրական հրապարակը բաղկացած է ֆաբրիկայի հարթակից, հանքաքարի հարթակից և պարզարանների հարթակից: Հանքաքարի ու պարզարանների հարթակների միջև կա նիշերի 20մ տարբերություն, ինչի պատճառով նախատեսված է հենապատ 118գծմ երկարությամբ:

Ֆաբրիկայի արտադրական հրապարակում տեղադրված են հետևյալ օբյեկտները՝


1. Հանքաքարի ջարդման տեղամաս:
 2. Ջարդված հանքաքարի պահեստ:
 3. Ռեագենտների տեղամաս:
 4. Հանքաքարի մանրացման տեղամաս:
 5. Ֆլոտացիոն տեղամաս:
 6. Մամլաքամիչների տեղամաս:
 7. Տրանսֆորմատորային ենթակայան:
 8. Թանձրիչների տեղամաս:
 9. Մեխանիկական տեղամաս:
 10. Ավտո-տեխ. սպասարկման տեղամաս:
 11. Նյութատեխնիկական պահեստ:
 12. Կենցաղային մասնաշենք:
 13. Հանքաքարի հարթակ:
 14. Կշեռք:
 15. Լաբորատորիա:
 16. Վթարային հոսքերի որսման ավազան:
 17. Պարզարաններ և անձրևաջրերի ջրահեռացման համակարգ:
- Պոչանքային տնտեսության մեջ են հետևյալ օբյեկտները՝

1. Պինդ պոչերի արտադրական լցակույտ:
2. Դատարկ ապարների լցակույտ:
3. Սկզբնական պատվարը:

Լցակույտը տեղադրված է հարստացուցիչ ֆաբրիկայի արտադրական հրապարակի հյուսիս-արևմուտք, 450-550մ հեռավորության վրա: Լցակույտի մակերեսը կազմում է 29.3 հա:

Արդյունաբերական շենքերի և շինությունների կրող կոնստրուկցիաները նախատեսվում է իրականացնել մետաղից, շինությունների շրջանակները նախագծված են կոշտ կամ կախովի միացումներով, մոնտաժային հողերը և միացումները նախատեսված են սովորական պտուտակներով և եռակցմամբ: Նախատեսվում է կիրառել ցածր լեգիրացված պողպատից լայն եզրային և հեծանային երկտավրներ, շվեյերներ, անկյունակներ:

Արդյունաբերական տաքացվող շենքերը ծածկելու համար օգտագործվել են հավաքովի պողպատե կոնստրուկցիաներ՝ «Սենդվիչ» տիպի պանելների տեսքով՝ պողպատե ֆերմաների և հեծանների երկայնքով: Չջեռուցվող շենքերի ծածկույթը նախատեսված է ցինկապատ ծալքավոր թիթեղից: Վարչական շենքերի ծածկը մոնոլիտ երկաթբետոնից է:



Հիմնական արդյունաբերական շենքերի արտաքին պատերը նախատեսվում են իրականացնել «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմեկուսացմամբ: Չջեռուցվող շենքերի արտաքին պատերը նախատեսվում են ծալքավոր ցինկապատ պողպատե թիթեղից: Վարչական շենքի արտաքին պատերը քարաշեն են:

Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է ներկվեն ՈՓ-133 պենտաֆտալային էմալով՝ ԴՓ 021 մակնիշի ներկով նախնական ներկումով:

Ֆաբրիկայի հզորությունը բավարար է տարեկան մինչև 400 հազար տոննա հանքաքարի վերամշակման համար: Այն ժամանակահատվածներում, երբ Մեղրի գետը սակավաջուր է, ֆաբրիկայի համար ջրառը Մեղրի գետից դադարեցվելու է: Վերամշակման հավելյալ արտադրական հզորությունները հնարավորություն են ստեղծելու սակավաջուր սեզոնին ֆաբրիկայի պարապուրդը կոմպենսացնելու:

Հանքաքարի ջարդման մասնաշենքը բաղկացած է հանքաքարի ընդունման բունկերից և ջարդման մասնաշենքից: Ընդունման բունկերը 6.0x9.0մ առանցքային չափսերով ստորգետնյա 1 մ բարձրությամբ ե/բ շինություն է: Վերգետնյա հատվածում բունկերի վրա 6.0x9.0մ առանցքային չափսերով և 12մ բարձրությամբ տեղադրված է մետաղական ծածկարան:

Ջարդման մասնաշենքը «1»-ից «3» առանցքներում 12.0մ և «Ա»-ից «Բ» առանցքներում 15.0մ հատակագծային չափերով, 14.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով ջերմամեկուսացմամբ:


Հանքաքարի պահեստ - բաղկացած է փոխակրիչներից, ստորգետնյա ջարդված հանքաքարի ընդունման երկու բունկերներից և ծածկարանից: Փոխակրիչները մետաղական հիմնակմախքով և ե/բ հիմքերով կառույցներ:

Ծածկարանը 10.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, ե/բ-ից: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են պրոֆիլացված երեսարկով: Ստորգետնյա բունկերները 8.0 x 20.0մ առանցքային չափսերով ստորգետնյա 12մ:

Ռեագենտների մասնաշենք 14.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Հանքաքարի մանրացման տեղամաս - 21.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Ֆլուտացիոն տեղամաս 21.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: «1»-ից «8» առանցքներում նիշերի



տարբերության արդյունքում և հանքաքարի մանրացման տեղամասի հատման մասում նախատեսվում է 6.0մ բարձրությամբ ե/բ հենապատ: «Բ»-ից «Գ» և «8» առանցքներում, ճանապարհի հետ հատման հատվածում նույնպես առաջանում է ե/բ հենապատ: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով ջերմամեկուսացմամբ: Ֆլոտացիոն տեղամասի ներսում «Բ»-ից «Գ» և «1» առանցքներում նախատեսվում է տրանսֆորմատորային ենթակայան:

Մամլաքամիչների տեղամաս - 15.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: «1»-ից «8» առանցքներում նիշերի տարբերության արդյունքում և ֆլոտացիոն տեղամասի հատման մասում նախատեսվում է 6.0մ բարձրությամբ ե/բ հենապատ: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Թանձրիչների տեղամաս - 18.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Մեխանիկական տեղամաս - 24.0 մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: Տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:


Ավտո-տեխսպասարկման տեղամաս - 24.մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ -ից: Տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Նյութատեխնիկական պահեստ - 18.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային ե/բ-ից: Տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Հանքաքարի հարթակը գտնվում է 1438.0 բացարձակ նիշում: Հարթակում են տեղակայված հանքաքարի պահեստը, մեխանիկական տեղամասը, ավտո-տեխսպասարկման տեղամասը, նյութատեխնիկական պահեստը, կենցաղային մասնաշենքը և լաբորատոր մասնաշենքը:

Ծածկարանը 6.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, ե/բ-ից: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Ծածկը իրականացվելու են պրոֆիլացված երեսարկով:

Լաբորատոր մասնաշենք - 9.0 մ բարձրությամբ երկհարկ շինություն է: Հիմքերը սյուների և պատերի տակ ժապավենային են, ե/բ-ից: Հիմնակմախքը ե/բ-ից է: Հարկերի կապն իրար միջև նախատեսվում է իրականացնել ե/բ աստիճաններով: Տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ:



Երկրորդ վերհանման պոմպակայան - 4.2մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների և պատերի տակ ժապավենային են, ե/բ-ից: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ միաթեք, անկազմակերպ ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Առաջին վերհանման պոմպակայան - 4.2մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների և պատերի տակ ժապավենային են, ե/բ-ից: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ միաթեք, անկազմակերպ ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Օպերատորի սենյակը - 3.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքը ե/բ միաձույլ սալ է: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ միաթեք, անկազմակերպ ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «Սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ: Ստորգետնյա մետաղակա բաքերն իրենցից ներկայացնում են տիպարային մետաղական 100-ից մինչև 500մ³ տարողունակությամբ ստորգետնյա բաքեր, որոնց համար հիմք են հանդիսանալու ե/բ միաձույլ սալերը:


Պայթուցիկ նյութերի պահեստ 4.2մ բարձրությամբ շինություն է: Հիմքերը սյուների տակ կետային են, իսկ պատերի տակ՝ ժապավենային, ե/բ-ից: Տանիքը երկթեք է, անկազմակերպված ջրահեռացմամբ: Պատերը և ծածկը իրականացվելու են «սենդվիչ» տիպի պողպատե եռաշերտ պատի պանելներից՝ հանքային բամբակով, ջերմամեկուսացմամբ:

Նյութատեխնիկական բաց պահեստ 10.0մ բարձրությամբ շինություն է: Հիմքը ե/բ միաձույլ սալ է: Հիմնակմախքը մետաղական է, տանիքը՝ երկթեք, կազմակերպված ջրահեռացմամբ: Ծածկը իրականացվելու է պրոֆիլացված երեսարկով:

Էլեկտրամատակարարում և էլեկտրասարքավորում էլեկտրամատակարարման հարցերը լուծվում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ № ՏՊ-600-6(10)/0006, 02.11.2011թ. և № ՏՊ-600-6(10)/0007, 02.11.2011թ. տրամադրած տեխնիկական պայմանների հիման վրա:

Ըստ տեխնիկական պայմանների կոմբինատի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է 110/10 կՎ-ի 6,4ՄՎտ հզորությամբ ենթակայանի նախագծում և շինարարություն: Այն նախատեսվում է տեղադրել հարստացման ֆաբրիկային մոտ: Վթարային սնուցումը նախատեսված է գոյություն ունեցող 10կՎ-ի 2x630կՎԱ հզորությամբ ստորգետնյա հանքավայրի ենթակայանից, որը ունի առանձին սնման աղբյուր:

Խմելու և արտադրական թարմ ջրի աղբյուրը Մեղրի գետն է: Խմելու ջրի հաշվարկային ծախսերը որոշված են համաձայն ՇՆ և Կ 2.04.01-85 մինչև 84 կՁ 1 մ3/ժամ ջերմանջատման համար: Ջրի հիմնական սպառիչը հարստացուցիչ ֆաբրիկան է, որը ջուրն օգտագործում է հարստացման տեխնոլոգիական գործընթացի (հանքաքարի մանրացում, հարստացում, ջրազրկում և այլն) համար, ինչպես նաև սառեցման, հիդրոխտացման, սարքավորումների և հատակների լվացման համար: Տեխնոլոգիական սարքավորումների սառեցման և հիդրոխտացման նպատակով ջրի ծախսերը ընդունված են համապատասխան յուրաքանչյուր սարքավորման անձնագրային տվյալների: Բոլոր արտադրամասերում հատակների լվացման համար անհրաժեշտ ջրի քանակն ընդունված է մաքրվող մակերեսի 3,0լ/մ² քանակությամբ: Տեխնոլոգիական կարիքների համար ջրի հաշվարկային ծախսերը հաշվարկված են համաձայն ջրաապարախյուսային տեխնոլոգիական սխեմայի: Տեխնոլոգիական



կանոնակարգով հաշվարկված է, որ 1տ ոսկի պարունակող հանքաքարի վերամշակման համար անհրաժեշտ է 3.0մ³ ջուր: 300000 տ/տարի հանքաքարի վերամշակման համար ջրի տարեկան շրջանառությունը կազմում է 300000x3.0 =900000մ³, օրականը՝ 900000:340 = 2647,1մ³, ժամայինը՝ 110.3մ³:

Արտադրական թարմ ջուրը 3.0կմ երկարությամբ 80մմ տրամագծով պողպատե եռակցված խողովակաշարով տրվում է հարստացուցիչ ֆաբրիկայի ռեգերվուարներ: Շրջանառու ջրամատակարարման համակարգը նախատեսում է թանձրիչներից և մամլաքամիչներից դուրս եկող ջրերը լցնել 20.0մ³ ծավալով բաքի մեջ, այնտեղից էլ պոմպով մղել ֆաբրիկայի արտադրական հրապարակում տեղադրված շրջանառու ջրի ռեգերվուարներ:

Նախատեսվում է նաև վթարային հոսքերի որսման ավազան, որտեղից ջրերը վերադարձվում են շրջանառու համակարգ: Ջրատարները հիմնականում տեղադրվում են ավտոճանապարհների երկայնքով:


Կենցաղային կոյուղու համակարգով հարստացուցիչ ֆաբրիկայի և արդ. հրապարակի օբյեկտներից կենցաղային կեղտաջրերը հեռացվում են դեպի «Յալմա 100Պ» մաքրման կայանի խորը կենսաբանական մաքրման կառուցվածքներ: Սարքավորման արդյունավետությունը 98 տոկոս է: Կոյուղու կոլեկտորն ընտրված է 150մմ տրամագծով կոյուղու ծալքավոր պոլիէթիլենային խողովակներից: Ուղեգծի երկարությունը մոտ 3.0կմ է: Կոլեկտորը տարված է ավտոճանապարհների կողքով:

Հարստացուցիչ ֆաբրիկայի տարածքում նախատեսվում են կառույցներ, որոնք ապահովելու են ջեռուցման, օդափոխության, տաք ջրամատակարարման ջերմային ծախսերը, տեխնոլոգիական կարիքների համար անհրաժեշտ շոգու և սեղմած օդի պահանջները: Կառուցվող ձեռնարկության տարածքում գազատար չկա:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Կապարե կուտակիչները, շահագործման համար պիտանե-լիությունը կորցնելու դեպքում, փոխարինվում են նորերով: Թափոնի որոշ քանակ կուտակվելուց հետո հանձնում են համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությանը:

Առաջացող թափոնների ցանկը

Թափոնի անվանումը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Թափոնի վտանգավոր հատկու-թյունները	Թափոնի վտանգա-վորության դասը	Քանակու-թյունը, տ/տարի
1	2	3	5	6
Բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	Հրդեհավտանգ	III	0.05
Բանեցված չվնասված կապարե կուտակիչներ՝ չծուլված էլեկտրոլիտով	92110102 13 01 3	Թունավոր, կոռոզիոն ակտիվ	III	0,2
Հալոգեններ չպարունակող բանեցված	54100213 02 03 3	Հրդեհավտանգ	III	1.4



Թափոնի անվանումը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Թափոնի վտանգավոր հատկու- թյունները	Թափոնի վտանգա- վորության դասը	Քանակու- թյունը, տ/տարի
1	2	3	5	6
հիդրավլիկ յուղեր				
Բանեցված դիզելային յուղեր	54100203 02 03 3	Հրդեհավտանգ	III	2,0
Օգտագործված ածխային էլեկտրոդներ	31405200 01 00 4	Էկոթունավոր	IV	0.2
Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	Հրդեհավտանգ	IV	0,1
Հարստացուցիչ Ֆաբրիկաների շլամներ և պոչանքներ	34010110 04 01 4	Հրդեհավտանգ չէ	IV	284 000
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավոր- ված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի	91200400 01 00 4	Էկոթունավոր	IV	15,9


Ֆաբրիկայի կառուցման համար նախատեսվող տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Ֆաբրիկայի տարածքին ամենամոտ հուշարձանը «Լիճքվազ» վայրում, աղբյուրի մոտ գտնվող խաչքարն է, մոտ 1.3կմ հեռավորության վրա:

Ռեկուլտիվացման և կոնսերվացման աշխատանքների ընդհանուր ծրագիրը

Խոշորացված գնահաշվարկ ռեկուլտիվացիա առաջին տարբերակով իրականացման համար

N	Ծախսային հոդված	Արժեքը հազ.դրամ
1.	Ֆաբրիկայի սարքավորումների ապամոնտաժում	2000,0
2.	Շինությունների քանդում, տարածքի վարում, բնական դրենաժի վեկանգնում, ցանք	7000,0
3.	Օժանդակ արտադրամասերի սարքերի ապամոնտաժում	1000,0



4.	Շինությունների քանդում, տարածքի վարում, ցանք	3000,0
5.	Տարածքը թափոններից ազատումը	2000,0
6.	Չոր պոչերի վերջին խցի մակերեսի հարթեցում, լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա	5000,0
7.	Ֆաբրիկայի ներքին ճանապարհների վարում, ցանք	2000,0
8.	Ընդամենը	22000,0
9.	Վերադիր ծախսեր , 10%	2200,0
10.	Ընդամենը	24200,0
11.	Չնախատեսված ծախսեր , 5 %	1210,0
12.	Ընդամենը	25410,0
13.	ԱԱՀ , 20 %	5082,0
14.	Ընդամենը	30492,0


Խոշորացված գնահաշվարկ ռեկուլտիվացիա երկրորդ տարբերակով իրականացման համար

N	ծախսային հոդված	Արժեքը հազ.դրամ
1	Ֆաբրիկայի սարքավորումների ապամոնտաժում	2000,0
2	Օժանդակ արտադրամասերի սարքերի ապամոնտաժում	1000,0
3	Տարածքը թափոններից ազատում	2000,0
4	Չոր պոչերի վերջին խցի մակերեսի հարթեցում, լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա	5000,0
	Ընդամենը	10000,0
5	Վերադիր ծախսեր , 10%	1200,0
	Ընդամենը	11200,0
6	Չնախատեսված ծախսեր , 5 %	560,0
	Ընդամենը	11760,0
7	ԱԱՀ, 20 %	2352,0
	Ընդամենը	14112,0

Ռեկուլտիվացում և կոնսերվացում

Ֆաբրիկայում աշխատանքների դադարեցումից հետո նախատեսվում է.

- բոլոր այն սարքավորումները և խողովակները որոնք անմիջապես շփվել են թունավոր նյութերի հետ, պետք է վնասազերծվեն,
- ռեազենտների և քիմիկատների մնացորդները կոնսերվացումից հետո պետք է վաճառվեն կամ վերադարձվեն մատակարարին: Վաճառման ենթակա են նաև վառելանյութերի և յուղերի մնացորդները,
- տարածքում կուտակված վտանգավոր թափոնները պետք է հանձնվեն պայմանագրային հիմունքով լիցենզավորված կազմակերպություններին,
- տարածքի վարակված հողի շերտը պետք է հանվի և տեղափոխվի պոչերի պահեստարան,
- չոր պոչերի ռեկուլտիվացումը իրականացվելու է փուլային՝ յուրաքանչյուր խցի ծավալի սպառումից անմիջապես հետո կատարվելու է տարածքից հանված հողի փոռում պոչերի մակերեսին 15սմ շերտի հաստությամբ և կիրականացվի խոտաբույսերի ցանք: Կուտակված հողի բերրի շերտի քանակի անբավարար լինելու դեպքում կիրականացվի հիդրոցանք: Շենքերը և շինությունները՝



Տարբերակ 1. Սարքավորումները, շենքերը և շինությունները կապամոնտաժվեն, հիմքերը կհավասարեցվեն հողին, կվերականգնվի բնական դրենաժը: Ճանապարհները և մերձատար ճանապարհները կքանդվեն, տարածքը պետք է մաքրել, վարել և վերականգնել նախկին լանդշաֆտը:

Տարբերակ 2. Տարածքը ջարդոնից, թափոններից մաքրելուց և վնասազերծելուց հետո, շենքերը և շինությունները կարող են վաճառվել կամ վարձակալվել այն պայմանով, որ նոր գործունեությունը չի հակասի ՀՀ սանիտարական և էկոլոգիական պահանջներին:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Կառուցվող ֆաբրիկայի չխախտված տարածքից, որը կազմում է ընդհանուր տարածքի 20% (2000մ²) բերրի շերտը, որի հզորությունը տատանվում է 0-30սմ պետք է հանվի և տեղափոխվի այդ նպատակով հատկացված տարածք:

-Մոտ 450-600մ³ հողի ժամանակավոր պահպանման համար, ստեղծվում է մինչև 3 մետր հասնող բլուրներ, որոնց վրա իրականացվում է հողապաշտպանական նպատակներով թիթեռնածաղկավոր և հացազգի խոտախառնուրդի ցանք:

-Հետագայում հողի բերրի շերտը կարող է օգտագործվել ֆաբրիկայի տարածքի կանաչապատման համար, կամ ֆաբրիկայի շահագործման ավարտից հետո ռեկուլտիվացման աշխատանքների համար:

-Փոշու արտանետումների նվազեցման համար կատարվում է տարածքի ջրցանում:

-Շինարարական հրապարակը ծածկվում է պոլիէթիլենային ծածկույթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը և նպաստում փոշու նստեցմանը:

-Քանի որ արտանետումների հիմնական աղբյուրներ են հանդիսանում շինարարական տեխնիկան և փոխադրամիջոցները, ապա անհրաժեշտ է խստորեն հետևել նրանց տեխնիկական վիճակի, օգտագործվող դիզելային վառելիքի որակի վերահսկմանը:

-Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների տևական պահպանման և կատարված միջոցառումների անբավարարության դեպքում անհրաժեշտ է դադարեցնել շինարարական աշխատանքները:

- Արգելվում է շինհրապարակից դուրս լրացուցիչ հողատարածքների աղտոտումը, շինադքի կուտակումները և այլն:

-Շինարարության համար անհրաժեշտ բետոնը բերվելու է պատրաստի: Տարածքում չի նախատեսվում խճի, ավազի և ցեմենտի պահեստներ:

-Արգելվում է շինտեխնիկայով գետերի հոսքերի ծանծաղուտով հատումը:

-Անսարք տեխնիկայի աշխատանքը շինհրապարակում արգելվում է:

- Կպահպանվի արտհրապարակի եզրերին աճող ծառերը և թփուտները:

- Շինհրապարակը ցանկապատվելու է:

-Ֆաբրիկայի մերձատար ճանապահների տակ կթողնվեն փոքր կաթնասունների, երկկենցաղների, սողունների համար անցումներ:


Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների ծրագիր



Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Աղյուսակ 10.1

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Ֆաբրիկայի հարևանությամբ կիրճով հոսող ջրեր	Մինչև հարստացուցիչ ֆաբրիկա Հարստացուցիչ ֆաբրիկայից հետո	Ջրի ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$ pH Sb, մգ/լ Cu, մգ/լ Fe, մգ/լ Zn մգ/լ Pb մգ/լ SO_4^{2-} , մգ/լ Չոր մնացորդ, մգ/լ Հիմնայնություն, մգ-էկվ/լ Ca^{2+} , մգ/լ Էլեկտրահաղորդականություն նավթամթերքներ	Քիմիական անալիզ	շաբաթական մեկ անգամ
Մեղրի գետ	Մինչև հարստացուցիչ ֆաբրիկա Հարստացուցիչ ֆաբրիկայից հետո	Ջրի ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$ pH Sb, մգ/լ Cu, մգ/լ Fe, մգ/լ Zn մգ/լ Pb մգ/լ SO_4^{2-} , մգ/լ Չոր մնացորդ, մգ/լ Հիմնայնություն, մգ-էկվ/լ Ca^{2+} , մգ/լ Էլեկտրահաղորդականություն նավթամթերքներ	Քիմիական անալիզ	շաբաթական մեկ անգամ
Մթնոլորտային օդ	Ֆաբրիկայի տարածք Գ Այգեձոր Գ. Լեկվազ	Հանքաքարի փոշի	նմուշառում, չափումների ավտոմատ չափման սարքերով. փոշու կոնցենտրացիա – Aerocet 831:	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Ֆաբրիկային հարող տարածք Ստուգողական կետում	As, Fe, Sb, Zn, S, Cu, Pb, նավթամթերք- ներ	նմուշառում, նմուշի քիմիական անալիզ	տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
Կենսաբազմա- զանություն	Հարստացուցիչ ֆաբրիկայի և պոչամբարի սանիտարապաշտ- պանական գոտի	Կենսաբազմազանության առկա վիճակը	երթուղային	Տարին մեկ




Գնահաշվարկ

	Գործունեությունը	1 նմուշի արժեքը, հազ.դրամ	Տվյալ նմուշների միանգամյա քանակը	Արժեքը, հազ.դրամ	Տարեկան քանակը	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	Ջրի մեկ նմուշառման	3,0	4	12,0	24	288,0
2	Ջրի քիմիական անալիզ	20,0	4	80,0	24	1920,0
3	Օդի նմուշառում	5	3	15	36	540,0
4	Հողի նմուշառում	5	2	10	2	20,0
5	Հողի անալիզ	30	2	60	2	120,0
6	Կենսաբազմազանություն	400,0	1	400,0	1	400
	ընդամենը	463,0		1040,0		3288,0

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Ֆաբրիկայի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել



անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

- Ֆլուտամեքենաները անհրաժեշտ է ունենան ավտոմատ սարքավորումներ, ինչը թույլ կտա նվազեցնել հոսքակորուստները, վերացնել վթարային վերաթափումները:

- Վերաթափումների և հոսքակորուստների հավաքման և տեխնոլոգիական գործընթաց վերադարձնելու համար անհրաժեշտ է, որ արտադրամասը կահավորված լինի դրենաժային համակարգով և վթարային ավազանով:

- Պոչերի պահեստի պատնեշների վրա նստեցման և հորիզոնական շեղումների հսկման համար բերմաների վրա անհրաժեշտ է տեղադրել պիեզոչափեր և ռեպերներ:

- Անհրաժեշտ է բոլոր շինությունները ունենան հողանցում և շանթապաշտպանություն:

- Այն հատվածներում, որտեղ խողովակաշարերը հատվում են ճանապարհների հետ, անհրաժեշտ է նախատեսել հատուկ անցումներ (խողովակը բետոնե վաքում և այլն),

- Բոլոր աշխատակիցները պետք է ապահովված լինեն հատուկ արտահագուստով, սաղավարտով, կոշիկներով, ձեռնոցներով, ակնոցով:

- Համաձայն ջրային օրենսգրքի 34-րդ հոդվածի՝ «Զրոգտագործման թույլտվության պայմանների փոփոխման դեպքում, բացառությամբ սույն օրենսգրքի 33.1-ին հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով (ջրօգտագործողի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալների նվազեցում կամ ռեժիմի կրճատում կամ ջրային ռեսուրս կամ բաց ջրավազան հեռացվող կեղտաջրի ծավալի նվազեցում կամ որակի բարելավում նախատեսող դեպքում՝ ջրօգտագործողի դիմումի հիման վրա) սահմանված դեպքերի, թույլտվություն ունեցող անձը ներկայացնում է նոր հայտ՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ջրօգտագործման նոր թույլտվություն ստանալու համար»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Լիճքվազ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մեղրի համայնքում լեռնահարստացման ֆաբրիկայի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա



ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝
վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ



Հովիկ Մեսրոպյան